ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ
REPORTS

ԱԶԱՏ ԲՈՋՈՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ
bznazt@gmail.com
ԳԵՈՐԳԻ ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ
georgmirzabekyan@gmail.com

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԻԱ ԴԱՐԱՍԿԶԲԻ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2019 թ. հունիսի 20–22-ին Երևանում կայացավ «Արևելյան աղբյուրագիտությունը և պատմագրությունը ԻԱ դարասկզբի Հայաստանում» խորագրով միջազգային գիտաժողովը, որը նվիրված էր ականավոր հայագետ-արևելագետ Արամ Տեր-Ղևոնդյանի (1928–1988) ծննդյան 90-ամյակին:

Գիտաժողովի հրավիրման նախաձեռնությունը պատկանում էր ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Արևելյան աղբյուրագիտություն և պատմագրություն բաժնին, որը 1980-ական թթ. հիմնադրել է Արամ Տեր-Ղևոնդյանը: Գիտաժողովի համակարգման ամբողջ պատասխանատվությունը իրենց վրա էին վերցրել բաժնի աշխատակիցները, որոնց նախապատրաստական աշխատանքների ընթացքում մեծ օգնություն են ցույց տվել Արևելագիտության ինստիտուտի տնօրինությունը և գրեթե բոլոր բաժինների աշխատակիցները: Գիտաժողովի կազմակերպման աշխատանքներին ներգրավվել և իրենց մասնակցությունն են բերել ՀՀ ԳԱԱ նախագահությունը, Երևանի պետական համալսարանը, մասնավորապես՝ արևելագիտության և բանասիրության ֆա-

կուլտետները, ինչպես նաև Մաշտոցի անվան «Մատենադարան» հին ձեռագրերի ինստիտուտը: Կոնֆերանսի կազմկոմիտեն ղեկավարում էր ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Արևելյան աղբյուրագիտություն և պատմագրություն բաժնի վարիչ Ազատ Բոզոյանը:

Գիտաժողովը, որն ընթացել է Մատենադարանի դահլիճում և Գիտությունների ազգային ակադեմիայի հանդիսասրահում, մեծ արձագանք է գտել ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Դրա մասին է վկայում հասարակագիտական գիտությունների՝ հատկապես մի շարք առաջատար միջնադարագետ մասնագետների մասնակցությունը գիտաժողովին: Գիտաժողովի հայազգի և արտերկրի մասնակիցները (վերջիններս ժամանել էին՝ ԱՄՆ-ից, Գերմանիայից, Ֆրանսիայից, Իսրայելից, Վրաստանից, Հունաստանից, Իտալիայից, Ռուսաստանի Դաշնությունից) ներկայացնելով իրենց բարձրակարգ գիտական հաստատությունները, նոր հնարավորություն էին ստացել ներկայացնել իրենց պրպտումները հայաստանյան լսարանին, մտքերի փոխանակությամբ և գիտական հետագա համագործակցության ընդլայնմամբ՝ շարունակելով մի շարք ուշագրավ խնդիրների վերլուծությունը: Գիտաժողովին մասնակցած զեկուցողների թիվը գերազանցում էր 30-ը:

Հանդիսավոր նիստին ելույթ ունեցան Գիտությունների ազգային ակադեմիայի հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը (նախագահող), Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանը (ԱԻ), Մատենադարանի տնօրեն, դոկտոր Վահան Տեր-Ղևոնդյանը, ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտերի դեկան, պրոֆեսոր Ռուբեն Մելքոնյանը, Միչիգանի Անն Արբըր համալսարանի պրոֆեսոր Գևորգ Բարդակչյանը: Նրանք կարևորեցին նման գիտաժողովների նշանակությունը հայագիտության զարգացման գործում, որը հնարավորություն է ընձեռում բացարձակապես նոր դիտանկյունից լուսաբանել միջնադարագիտության և արևելյան բանասիրության հատկապես դեռևս լայն քննարկման չարժանացած խնդիրները, մասնագիտական հիմք ստեղծելով՝ մեթոդական և գիտական հետազոտությունների բազմակողմանի ուսումնասիրության համար: Բանախոսները խորհրդանշական համարեցին գիտաժողովում քննարկվելիք հիմնահարցերը ներկայացնել հենց Արամ Տեր-Ղևոնդյանին նվիրված գիտաժողովին, քանի որ անուրանալի են վերջինիս ծառայությունները Հայաստանում Արևելյան աղբյուրագիտություն գիտաճյուղի զարգացման գործում: Հանդիսավոր նիս-

տի վերջում ցուցադրվեց Արամ Տեր-Ղևոնդյանի գործունեությանը նվիրված վավերագրական ֆիլմ:

Գիտաժողովի առաջին նիստը նախագահում էին Աբրահամ Տէրեանը (Ս. Ներսէս Ընծայարան, Նիւ Եորք) և Ռուբեն Սաֆրաստյանը: Նիստի զեկուցողները հիմնականում անդրադառնում էին Արամ Տեր-Ղևոնդյանի աշխատանքներին, որոնք նվիրված են Բագրատունյաց դարաշրջանի պատմության խնդիրներին, նոր փաստերով ու վերլուծություններով հարստացնելով գիտության այդ բնագավառը: Իգոր Դորֆման-Լազարևը (Մայնի Ֆրանկֆուրտ, Գյոթեի համալսարան) ընթերցեց «Պարականոն գրականությունը և արքայության գաղափարը Գագիկ Արծրունու օրոք (908–943/44)» զեկուցումը, որը հեղինակի վերջին մի քանի տարվա պրպտումների արդյունքն էր: Արսեն Շահինյանի (ՍՊԲ. Պետական համալսարան) «Իրո՞ք Առանը վաղ միջնադարյան արաբամահմեդական մատենագիրների մոտ նշված ´Āḏarbayǧān al-ʻulyā´ (Վերին Ադրբեջան) տեղանվամբ» հաղորդումով անդրադարձ էր կատարել տարածաշրջանի պատմության խեղաթյուրման մի յուրօրինակ փորձի բացահայտմանը: Օլգա Վարդազարյանը (ՄՄ) «Աստվածուրացությունը և նովատական խնդիրը միջնադարյան Հայաստանում» զեկուցումով անդրադարձել էր Ե դարի Հայաստանում կրոնաեկեղեցական որոշ մոտեցումների, որոնք թույլ են տալիս բացահայտել դարաշրջանի ոգին: Ժերար Դեդեյանը (Մոնպելիե) «Նախարարական համակարգի զարգացման հետազոտությունը Արամ Տեր-Ղևոնդյանի երկերում» զեկուցման մեջ բացահայտեց տաղանդավոր գիտնականի մոտեցումները տվյալ հիմնախնդրի բացահայտման ասպարեզում: Աղավնի Ժամկոչյանը (ՀԱԻ) «Դվինի ամիրայությունը և Շեդդադյանները» և Նյուրա Հակոբյանը (ՀԱԻ) «Քուստ-ի Կապկոհ վարչական միավորը և Դվինը (ըստ հնագիտական հետազոտությունների)» զեկուցումների մեջ անդրադարձան վերջին տարիներին հնագիտական պեղումներով հայտնաբերված նյութերին, որոնք վերահաստատում են Արամ Տեր-Ղևոնդյանի մի շարք դրույթների իրավացիությունը:

Ալեքսան Հակոբեանի (ԱԻ) և Իգոր Դորֆման Լազարևի նախագահությամբ շարունակվեցին գիտաժողովի աշխատանքները, որոնք ազդարարում էին երկրորդ նիստի մեկնարկը, որը վերաբերում էր հայկական և մերձավորարևելյան աղբյուրագիտության մի շարք հիմնախնդիրների: Միքայել Սթոունը (Երուսաղեմի եբրայական համալսարան) «Սինայի և Ս. Երկրի հայկական վիմագիր արձանագրությունների կորպուսը» զեկուցմամբ քննարկման նյութ դարձրեց տարածաշրջանում հայտնաբերված նմանատիպ սկզբնաղբյուրների

վերծանման մեթոդաբանությանը վերաբերող խնդիրներ: Աբրահամ Տէրեանը (ԱՄՆ) «Վարք Մաշտոցի» շուրջ նոր նկատողութիւններ» հաղորդման մեջ նոր շերտեր բացահայտեց Կորյունի երկում, որոնք ցայսօր մասնակիորեն չէին քննվել: Ազատ Բոզոյանը (ԱԻ) «Հայոց եկեղեցին Տիեզերական եկեղեցու նվիրապետական համակարգում և այբուբենի ստեղծման նշանակությունը» և Գեորգ Ղազարյանը (Աթենքի ազգային համալսարան) «Անտիոքի պատրիարքության հայկական թեմերը (Ե - ԻԱ դդ.)» զեկուցումների մեջ անդրադարձան Այսրկովկասի եկեղեցական կառույցների նշանակությանը և գնահատեցին դրանց դերը տարածաշրջանի պատմամշակութային գործընթացներում: Հելեն Գիունաշվիլին (Գ. Ծերեթելու անվան Արևելագիտության ինստիտուտ) «Վրացատառ պարսկերեն ավետարան-ձեռագրի (ԺԷ-ԺԸ դդ.) լեզվաբանական բնութագիրը» հաղորդման մեջ քննության նյութ էր դարձրել մշակութային այդ երևույթի հետազոտման այժմեական խնդիրները: Էլինա Ղազարյանը (ՄՄ) «Հաֆիզի Աբռուի «Աշխարհագրության» տվյալները Հայաստանի և հայկական բնակավայրերի մասին» զեկուցման մեջ ցույց տվեց պարսիկ հեղինակի կարևորությունը Հայաստանի պատմական աշխարհագրության հետազոտման գործում:

Օրվա վերջին նիստը, որը ղեկավարում էին Վահան Տեր-Ղևոնդյանը և Ազատ Բոզոյանը, ամբողջովին նվիրված էր Կիլիկիայի Հայոց թագավորության և դրա պատմության սկզբնաղբյուրների հետազոտման խնդիրներին: Այն սկսվեց Ռյովեն Ամիթայի (Երուսաղեմի եբրայական համալսարան) «Մոնղոլների հովանու ներքո կիլիկյան Հայաստանի ներխուժումները (1260 և 1300 թթ.) Պաղեստին» զեկուցմամբ, ուր ճանաչված հեղինակը մանրամասն քննեց սկզբնաղբյուրների և հատկապես մամլուքյան պատմագրության տեղեկությունները հիշատակված իրադարձությունների շուրջ: Հայոց պատմության և մամլուքյան պատմագրության առնչությունների խնդիրներին անդրադարձան նաև Գագիկ Դանիելյանը (ՄՄ) «Հայերը ԺԴ դարի մամլուքյան Կահիրեում. *Ḫizānat al-bunūd* հայաբնակ թաղամասը» և Ջուզեպպե Չեչերեն (Բոլոնիայի համալսարան) «՛-Հայոց խալիֆ-Հռոմկլայի կաթողիկոսի պատկերը արաբ-մամլուքյան սկզբնաղբյուրներում» զեկուցումների մեջ: Լիանա Աղաբեկյանը (ԱԻ) «Կիլիկյան Հայաստանը ԺԲ դ. Բ կեսի Մերձավոր Արևելքի ռազմաքաղաքական գործընթացներում» և Կլոդ Մութաֆյանը (Փարիզ) «Կիլիկյան Հայաստանը մահմեդականների հետ կնքած պայմանագրերում» զեկուցումներով ունկնդիրների ուշադրությունը հրավիրեցին Հայոց պետականության կարգավիճակին վերաբերող սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների վրա:

Չնայած նիստերի հագեցվածությանը, տեղի էին ունենում համապարփակ քննարկումներ, որոնց բնույթը կառուցողական էր և քննական վերլուծության նպատակ էին հետապնդում:

Երկրորդ օրվա նիստը ՀՀ ԳԱԱ հանդիսասրահում էր, որտեղ Արամ Տեր-Ղևոնդյանի հիշատակին նվիրված հարգանքի խոսքով հանդես եկան ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Նիկոլայ Հովհաննիսյանը (ԱԻ) և ՌԳԱ Արևելյան ձեռագրերի ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր Իրինա Պոպովան, որոնք ընդգծեցին Արամ Տեր-Ղևոնդյանի գիտական գործունեության շարունակական կապը Պետերբուրգյան արևելագիտական դպրոցի դասական ավանդների հետ: Պրոֆեսոր Հովհաննիսյանը վերաարժևորեց Արամ Տեր-Ղևոնդյանի գիտական ժառանգությունը, նրա հմտությունները և այն եռանդը, որով նա տոգորված էր իր հետազոտությունների ստեղծման ընթացքում:

Վահե Թորոսյանի (ՄՄ) և Հայկ Քոչարյանի (ԵՊՀ) նախագահությամբ տեղի ունեցած չորրորդ նիստը ամբողջովին նվիրված էր վերջին տարիներին Արևելյան աղբյուրագիտության բնագավառում ԵՊՀ-ում և Մատենադարանում կատարված աշխատանքներին: «Ը – Թ դարերի արաբական աշխատությունները որպես ադապտացիոն գործընթացների ուսումնասիրման աղբյուր» զեկուցեց Դավիթ Հովհաննիսյանը (ԵՊՀ), որին հաջորդեցին Գայանե Մկրտումյանի (ԵՊՀ) «Մատենադարանի արաբատառ ֆոնդի № 358 ձեռագիր-պայմանագիրը հայ-մահմեդական հարաբերությունների համատեքստում», Շուշան Կյուրեղյանի (ԵՊՀ) «Իբն ալ-Ջաուզիի «Թալբիս Իբլիս» աշխատության կառուցվածքի տրամաբանությունը», Տաթևիկ Մկրտչյանի (ԵՊՀ) «Նահջ ալ-Բալաղան», որպես Ժ դարի շիա իսլամի (մահմեդականության) կրոնագաղափարական հիմքերի ուսումնասիրման աղբյուր», Քնարիկ Սահակյանի (ՄՄ) «Մատենադարանի արաբատառ ֆոնդի արաբերեն քերականական ձեռագրերը» և Իվեթ Թաջարյանի (ՄՄ) ու Անի Ավետիսյանի (ՄՄ) «Արևելյան ձեռագրերի կեղծման արվեստն ըստ Մատենադարանի արաբատառ հավաքածոյի Հմր 137 ձեռագիր օրինակի» աղբյուրագիտական հարուստ նյութ պարունակող հաղորդումները: Բանախոսների թեմաների առանցքը արաբական, պարսկական և օսմանյան մատենագրական հուշարձաններն էին, որոնց տեղեկությունները հեղինակները փորձում էին քննել Մերձավոր Արևելքի պատմության և ետնախորքի վրա:

Հինգերորդ նիստում հանդես եկան, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի թյուրքագիտության, արաբագիտության և արևելյան աղբյուրագիտություն բաժինների աշխատակիցները: Նիստին նախագահում էին Քրիս-

տինե Կոստիկյանը և Հելեն Գիունաշվիլին: Տեսական և աղբյուրագիտական քննություններով հանդես եկան թուրքագետներ Ռուբեն Սաֆրաստյանը (ԱԻ) «Հալիլ Մենթեշեի հուշերը» որպես աղբյուր Հայոց ցեղասպանության ու Հայկական հարցի մասին» և Անուշ Հովհաննիսյանը (ԱԻ) «Օսմանիզմ թե՞ թյուրքիզմ. հայեցակարգերի պայքարը «Tarih-i Osmani Encümeni Mecmuası» պարբերականի էջերում» զեկուցումներով: Աղբյուրագետներ Գեորգի Միրզաբեկյանը (ԱԻ) «Կարբիի *նահիեն* (գյուղախումբը) 1728 թ. օսմանյան ընդարձակ հարկացուցակում» և Քրիստինե Կոստիկյանը (ԱԻ) «Ֆազլի Բեկ Իսֆահանի տարեգրությունը, որպես հայ ժողովրդի ԺԶ - ԺԷ դարերի պատմության աղբյուր» զեկուցումներում վերհանեցին իրենց կողմից քննված սկզբնաղբյուրների հետազոտման մեթոդներին վերաբերող մի շարք խնդիրներ: Նիստում հանդես եկավ նաև Արաքս Փաշայանը (ԱԻ) «Հայաստան-Արաբական աշխարհ համագործակցության հեռանկարները» զեկուցումով, ուր հեղինակն ամփոփեց իր վերջին տարիների պրպտումները:

Վերջին նիստի առաջին երկու զեկուցումները նվիրված էին Հայկական սկզբնաղբյուրներին. Ալեքսան Հակոբյանը (ԱԻ) զեկուցեց «Հայոց դարձի մանրամասներն ըստ Գրիգոր Լուսաւորչի "Վարքի" արաբերէն տարբերակի» հաղորդումը, ծանրանալով քրիստոնեության ընդունման թվականին վերաբերող բանավեճի վրա, իսկ Արթուր Մաթևոսյանը (ԱԻ) անդրադարձավ «Ս. Երրորդության դավանանքը Ս. Գրիգոր Տաթևացու «Ոսկեփորիկ»-ում» թեմային: Գիտաժողովի վերջին՝ «Դվինի պեղումներից գտնված արաբատառ արձանագրությունները» զեկուցումն ընթերցեց Տիգրան Միքայելյանը (ԱԻ):

Հատկանշական է, որ երկրորդ օրն ամփոփվեց «Արևելյան աղբյուրագիտություն» թվային գրադարանի բացմամբ, որն, անշուշտ, կարևոր իրադարձություն էր հայագիտական և արևելագիտական հետազոտությունների հետագա ընթացքի համար:

Հարկ է ընդգծել որ գիտաժողին ընդառաջ մեկ գրքույկի սահմաններում տպագրվել էին ինչպես ծրագիրը, այնպես էլ՝ գիտական թեզիսները: Այնտեղ ընդգրկվել են նաև այն մասնակիցների համառոտ ակնարկները, որոնք հարգելի պատճառներով, չկարողացան ներկա գտնվել գիտաժողովին:

Այսպիսով, Արամ Տեր-Ղևոնդյանի 90-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովը կատարեց իր առջև դրած նպատակները՝ հարթակ տրամադրելով միջնադարագետներին, որոնք իրենց նոր խոսքը մատուցեցին: Հուսով ենք, որ հայագիտության և աղբյուրագիտական արդի խնդիրներին ուղղված գիտաժողովները հետայսու ավելի հաճախակի բնույթ կկրեն: